ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «19» 12 2014թ. № 1142-Ն

«ՆԱՐԵԿ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՄԻ ՇԱՐՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Նարեկ» գիտահետազոտական փակ բաժնետիրական ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել սույն հրամանի հավելվածում նշված տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին:

2. «Նարեկ» գիտահետազոտական փակ բաժնետիրական ընկերությանը որպես արտադրանքի սերտիֆիկացման մարմնի նշանակման ժամկետ սահմանել 3 տարի, տրամադրել նշանակման վկայական և շնորհել նույնականացնող համար՝ Ն-09(Հ-09)2014:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի «Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» N 801-Ա հրամանով

սահմանված կարգով «Նարեկ» գիտահետազոտական փակ բաժնետիրական ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թ.
_____ ____-ի N ____ -Ա հրամանի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1560-Ն որոշում
2. ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացնող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշում
3. ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշում
4. ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1913-Ն որոշում
5. ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 22-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1602-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 744-Ն որոշում
7. ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 491-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի «Գարեջրի և դրա արտադրության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 44-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Ծխախոտի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 540-Ն որոշում

10. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշում
11. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1546-Ն որոշում